Ծանր էր կացութիւնը։ Եւ հէնց որ հաշտարար պատուիրակութիւնը Բաթումից վերադարձաւ, Հ. Ազգ. Խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարութեան կազմակերպման՝ հրաւիրելով վարչապետութեան Յ. Քաջազնունիին. այստեղ էլ բացուեց անակնկալ դժուարութիւն. ժողովրդական կուսակցութիւնը, Մ. Պապաջանեանի գլխաւորութեամբ, կտրականապէս մերժեց Քաջազնունիի առաջարկը՝ մտնելու նախարարութեան մէջ։ Ժողովրդականները բաց արին կատաղի պայքար Հ. Յ. Դաշնակցութեան դէմ՝ պահանջելով, որ սա քաշուի ասպարէզից, և իշխանութիւնը յանձնուի իրենց։ Երկու հիմնաւորում էին առաջ քաշում նրանք՝ մամուլի ու հրապարակային ժողովի մէջ. նախ՝ Դաշնակցութիւնը, իր վարած քաղաքականութեամբ, առհասարակ, պատասխանատու էր հայ ժողովրդի գլխին եկած աղէտների համար. երկրորդ՝ Թիւրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու համար անհրաժեշտ էր նոր ոյժ հրապարակ հանել և այդ նոր ոյժը Ժողովրդական կուսակցութիւնն էր, որին և պէտք էր յանձնել կառավարութիւն կազմելը։

Դժուար չէր տեսնել, որ նման խնդիրներ յարուցանելիս՝ ժողովրդականների մէջ խօսում էր, աւելի շուտ, կիրքը, կամ, պատասխանատու վայրկեանին, գործից խուսափելու ցանկութիւնը, որովհետև վերջին 10–15 տարուայ ազգային–քաղաքական բոլոր կարևոր գործերում Հ.Յ.Դաշնակցութեան կողքին, իսկ շատ անգամ և նրանից առաջ, քայլում էին հէնց ժողովրդականները։

Բայց վերջին տեսակէտը, անշուշտ, որոշ ճշմարտութիւն պարունակում էր իր մէջ։ Ի հարկէ, շատ լաւ կը լինէր, եթէ այդ բոպէին մէջ տեղ գար ազգային մի նոր ոյժ, որ կարողանար, աւելի կամ պակաս ձեռնհասութեամբ, փոխարինել Հ. Յ. Դաշնակցութեան։ Այդպիսի ոյժ գոյութիւն չունէր, դժբախտաբար. Հայ Ժողովրդական կուսակցութիւնը — Թիֆլիսցի սահմանափակ թւով մտաւորականների ու քաղքենիների մի խմբակցութիւն — այդ ոյժը չէր։

Քաջազնունիի բոլոր ջանքերը՝ միջկուսակցական կառավարութիւն ստեղծելու՝ ի դերև ելան. ժողովրդականները յամառ կերպով մնացին իրենց տեսակէտի վրա։ Նրանց հաստատակամութեան նպաստում էր և այն հանգամանքը, որ Ազգ. Խորհուրդը չիւրացրեց Երևանի ու Թիֆլիսի համար ջոկ–ջոկ կառավարութիւններ կազմելու ծրագիրը. ժողովրդականները չէին ուզում հեռանալ Թիֆլիսից։

Ի վերջոյ, երկար բանակցութիւններից յետոյ, Քաջազնունին յաջողեց կազմել հետևեալ կառավարութիւնը. վարչապետ՝ ինքը, Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսեան, ներքին գործերի՝ Արամ, ելևմտական՝ Խ. Կարճիկեան, զինուորական՝ Յ. Հախվէրդեան։ Վերջինը միայն անկուսակցական էր, միւսները անդամ էին Հ.Յ.Դաշնակցութեան։

Կառավարութիւնը կարգաւորեց մի շարք ընթացիկ խնդիրներ. Վրաստանի կառավարութեան մօտ դիւանագիտական ներկայացուցիչ նշանակեց Ա. Ջամալեանին. յուլիս 2–ին վրաց կառավարութեան հետ կնքեց համաձայնութիւն 200 միլիոն անդրկովկասեան նոր բոներ բաց թողնելու մասին,